ճիք, սանտր, քեաէ, մէստ, հէյլիպէ, տպրըխ, փօշի, փէշկիր, գօտի, շալ, ալաճայ. և այլ ամենայն ինչ որ ուզես կայ և կու գտվի. Աստուած պէրէքէթ տայ ըխտաւորաց: Ցետ զատկին տեղացոց բերաննն ճանճ կու մտանէ: Եւ անտ յառաջ սեղանատունն, փոքրիկ սիրուն օտայ մի, և ըռէիզն մեզի սեղան եղեալ, չամիչ և կէմրէկ, և ես փոքր ինչ կերայ անտի մնացեալն մահրամաս դրի, զի 'ի սեղանոյ հայր Աբրահամու է և աւրհնութիւնն ամենայն քրիստոնէից եղիցի. և յելանելն 'ի մեր՝ և մեզ ետուր փէշքէշ ծառոյն անտի, փայտ և զէթուն. և ես ըստ կարեաց իմոց ետու զժամուցն. և նայ գրեաց զմերիտէն՝ որ յիշատակելոց է. այս ձախ կողմն է:

Կը շարունակուի:

Միհրդատ յայտնէ որդւոցն զխորհուրդ իւր արշաւելոյ ի Հռովմ:

Մատերուք, որդեակք իմ: Ահա եհաս ժամանակ
Թաքնութեան խորհրդոցս երևելոյ յաչըս ձեր.
Զամենայն ինչ տեսանեմ ազատ մըտացս համաչունչ,
Ոչ ինչ այլ մընայ ինձ՝ բայց յունկըն ձեր յայտնել զայն:
Փախեայ ես, այսպէս զինէն դըժպըհի բաղդն ետ հրաման,
Գիտելով չափ սակայն ձեր՝ զկենաց իմոց հանգամանս,
Ոչ կարէք հաւատալ թէ թաքըստեան լեալ յերկար
Ցանապատս յայս մընացից՝ զի եկեսցեն խընդրել զիս:
Են մարտից յաջողուածք, են եւ ձախող պատահարք.
Էր բազում անգամ երբեմըն զի՛ նդ կրուկ դարձ արարեալ,
Ցորժամ թըշնամին պատրեալ իմով փախըստեամբ
Զհետ կառաց իւրոց յակճիռս կացուցանէր զամբոխ սին,
Եւ ի պղինձ քանդակեալ ըզզաղփաղփուն յաղթանակն՝
Ըզպատկերս աշխարհաց իմոց յերկաթս արկանէր,
Ետես զիս Բոսփոր, զի նորահնար կազմութեամբք
Ի ճահճաց իւրոց անդրէն հանի ածի զահն եւ զհոյն,
Եւ զՀռոմն հալածեալ ի պակուցեալն Ասիոյ՝
Ի միում աւուր ըզգործ տարւոյ միոյ քանդեցի:
Ի փոխել ժամանակաց փոփոխին հոգք. Արեւելք
Ցագնապեալ՝ ոչ եւս ուժէ կըրկին մըրցմանն հանդուրժել.
Զագարակս իւր տեսանէ զարդիս խըռնեալս Հռոմովք
Զորս մերովքըս տուժիւք ընչաւետէ պատերազմ:
Ազգաց մեծութեանց յափըշտակօղք ծարաւիք,
Ցոխութեանց մերոց հըռչակ զամենեսին հրապուրեաց,
Դիմեն զան ամբոխասաստ, եւ նախանձկոտք ընդ իրեարս՝
Ցամայի զաշխարհ իւրեանց դընեն, եւ զմերս ողողեն:
Ես միայն կամ նոցա 'նդդէմ. մըտերմութիւնս դըժպըհի
Ծանր է բնաւ սիրելեացըս նուաճելոց կամ խոնջից.
Ա.յր այր ի բեռանէ զգլուխ իւր կամի զերծանել:

Մեծ անուն Պոմպէի յապահովէ զտէրութիւնն,
Արհաւիրք է Ասիոյ. քաւ պատահել աստ նըմա,
Ի Հռովմ, որդեակք իմ, ի Հռովմ կամիմ արշաւել։
Այս խորհուրդ յապուշ միտըս կըրթէ զձեզ, եւ կարծէք
Թէ թերեւս անյուսութեան իցէ այսօր այն ծընունդ։
Զըդնեմ մեզ մոլորութեանդ. եւ ձեռնարկումն այսպիսի
Զկատարումըն պահանջէ առ ի վաւեր լինելոյ.
Մի՛ դընէք ի մտի ձերում թէ ի կողմանցս յայսցանէ
Պատուարաք յաւիտենից իցէ Հըռովմ զատուցեալ։
Ամենայն ընդ որս անցից ծանօթ են ինձ ճանապարհք,
Եւ թէ մահ ոչ ժամանէ խափանել զիս առ ժամայս,
Զարդիւնըս բանից իմոց ոչ յոյժ յապաղեմ,
Զձեզ յամիսս երիս կանգնեմ Կապիտոլին ի ստորոտ։
Ցերկուանայք թէ Եւքսինոս ոչ տարցի զիս երկօրեայ
Ի տեղիսն յորըս Դանուբ գայ վախճանէ զընթացս իւր,
Թէ թիկանց դաշինք ուխտեալք ընդ Ապախտարս եւ ընդ իս,
Ի կողմանց անտի մուտս յԵւրոպիա չտայցեն ինձ։
Բանակ մեր ժողովեալ ի նաւակայս անդ նոցին՝
Ըսպայիւն իւրեանց աճեալ՝ ըստուարասցի հետ զհետէ։
Դակեանք, Պաննոնացիք, Գերմանիա խրոխտապանծ
Ակն ունին գըլխոյ միում՝ գոռոզութեան կալ դիմակ.
Տեսէք դուք՝ զի Սպանիա, Գալլիացիք մանաւանդ,
Ընդդէմ այնց պարըսպաց, զորս եւ առին իսկ երբեմն,
Ըզվրէժս իմ զարթուցին, եւ մինչ ի Ցոյնըս անգամ
Հրեշտակք զհեղգութենէ իմմէ եղեն ամբաստան.
Դիտեն՝ զի այս հեղեղ՝ կազմ ի զեղուլ ի նոսա՝
Եթէ 'նդ քարշ զիս տանիցի, ողողեսցէ զամենայն.
Տեսցիք դուք առ հասարակ՝ զի քան զաւերն իւր կանխեալ
Կարապետ Յիտալիա եւ զկնի հետոցս ընթացցին։
Անդանօր, քան յամենայն ճանապարհին, մինչ հասցիք,
Դըտցիք ըզսոկումն ի Հռովմական անուանէն,
Եւ զողորմն Իտալիա մրրկեալ դեռ եւս ի ծուխ հրոյն
Զոր ի շունչ իւր յետին աղատութիւն իւր վառեաց։
Ոչ, արքայորդիք, ոչ թէ ի ծագս աշխարհի
Ծանրացեալ ճընշէ Հըռովմ ընդ երկաթեացըն բեռամբ։
Ի մօտուստ եւս փըշեալ ըզաստկագոյն ոխից քէն,
Ամենի քո թըշնամիքդ առ դուրըս քո են, Հըռովմ։
Թէ կարօղ գըտան երբեմն ընտրել իւրեանց աղատիչ
Ըզգերին Սպարտակոս, զանարդ սրրով մրրցամարտ,
Եթէ զհետ փողեն ի կռիւ ընդ վրէժխընդիր խաղմարաս,
Ցորպիսի եռանդըն մեծ կարծէք նոցա դալ կանգնել

Ընդ դրօշուք ամաց բաղմաց յաղթանակող արքայի,
Որ զնախնիս իւր տեսանէ մինչ ի Կիւրոս վերացեալ։
Թող զայդ. յինչ վիճակ ըմբռնել զայն կարծիցէ։
Թափուր ի գընդաց՝ որ կարիցեն պահել զայն,
Մինչ բոլոր բովանդակ ի հալածել զիս պընդի,
Կարիցեն զդէմ իմ ունել կանայք նոցա և մանկտին։
Խաղասցուք, տարեալ արկցուք ի ծոց նորա զպատերազմ
Զոր նորա մոլուցք յրղեն ծագէ ի ծագ աշխարհի.
Ընդ գոռող աշխարհակալն ի տան իւրեանց կըռուեսցուք,
Սարսեսցեն եւ նոքա յահէ երդոցն հայրենեաց։
Աննիբալ զեկոյց կանխաւ, անոասցուք առնըն մեծի.
Ոչ երբէք պարտեսցին հռովմայեցիք, բայց ի Հռովմ։
Հեղձուսցուք զինքն յարեան իւրում հեղլոյ իրաւամբք.
Այրեսցուք զկապիտոլ որ գերութեանս ակն ունէր.
Վարեսցուք ըզփառսն աղարտ, եւ սըրբալունչ կորուսցուք
Զհարիւրոց թագաւորաց զամօթ, թերևս եւ զիմն իսկ,
Եւ բոց ի ձեռին՝ եղծցուք զանուանս ամենայն՝
Զորս Հռովմ ճակատագրէր անդ ի նախատ յաւիտեան։
Այս ահա փառացն է տենչ որով սրարբեալ է հոգիս։
Սակայն մի համարիցիք թէ հեռացեալ յԱսիոյ՝
Թողում զայն հռովմայեցւոց հանգըստաւէտ ըստացուած.
Գիտեմ՝ ուստի գըտեալ հանից նըմա պահպանիչս.
Կամիմ զի Հռովմ շուրջ ի թըշնամեաց պաշարեալ
Ի նանիր կոչեսցէ իւր յօգնութիւն զՊոմպէոս։
Պարթեւն՝ իբրեւ զիս հռովմայեցւոց սարսափումն՝
Ցանձն առնու վառել իմովս արդարամէտ բարկութեամբ.
Ցօժարեալ ի խառնել ընդ իս ըզքէն իւր եւ զազգ,
Ուստըր մի խընդրէ յինէն փեսայանալ ի դուստր իւր։
Այս պատիւ քեզ էանկ, փառնակ, եւ զքեզ ընտրեցի,
Արի երթ, եւ զու լիցիս երջանկաւէտն այն փեսայ։
Վաղիւ անյապաղ կամիմ տեսցէ առաւօտն
Ըզնաւացն իմոց հանդէս անցեալ ելեալ ըստ Բոսփոր.
Դու՝ զի չիք ինչ քեզ խափան, ել եւ այժմէն իսկ մեկնեաց,
Եւ փութովըդ պընդութեան լեր ընտրութեանս արժանի,
Կատարեալ զհարսանիսդ, անցեալ յայնկոյս զեփրատաւ
Ցուցջիր Ասիոյ միւս ոմն եւս այլ Միհրդատ։
Ի դալուկն հարցին մերս հասարակաց բըռնաւորք,
Եւ համբաւն ի Հռովմ մինչեւ առ իս եկեսցէ։

ՌԱՍԻՆ, *Միհրդատ. Հանդէս Գ. Տեսիլ Ա.*

ԹԱՐԳՄ. Հ. ԱՐՍԵՆԻ ԲԱԴՐԱՏՈՒՆԻՈՑ։